ուղարկող՝ info@tatevedu.am
ստացող՝ armavir2@mta.gov.am

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

«Զանգակ» հրատարակչության գիտակրթական կառույց ««Տաթև» գիտակրթական համալիրը» երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից՝ որպես 2021 թ. վերապատրաստող կառույց հանրակրթական բոլոր առարկաների գծով:

Վերապատրաստման ծրագրի թեմատիկ բաժանումը համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած «Հանրակրթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման» ծրագրին: Դասընթացները կվարեն ոլորտում հայտնի լավագույն մասնագետները՝ Զանգակ հրատարակչության դասագրքաստեղծ խմբերի անդամները, որոնք մասնակիցների հետ փոխադարձ կապ կպահպանեն նաև դասընթացի ավարտից հետո:

Ուսուցիչների պարտադիր վերապատրաստման դասընթացներն իրականացվում են պետական ֆինանսավորմամբ:
Եթե վերապատրաստվելու համար դիմում եք որպես անհատ ուսուցիչ, վճարում եք 25000 դրամ: Հաջորդ տարիներին վերապատրաստվող ուսուցիչների ցանկում ընդգրկվելու դեպքում Ձեր գումարը կփոխհատուցվի:

Իսկ թե որ ամիսներին եք ցանկանում վերապատրաստվել, կարող եք ընտրել ինքներդ: Ձևավորվել է ժամկետային չորս հնարավորություն, և Դուք կարող եք ընտրել դասընթացներին մասնակցելու Ձեզ հ րմար ժամանակահատվածը:
Դասընթացները կանցկացվեն ինչպես Երևանում՝ Տաթև գիտակրթական համալիր ում (հասցեն՝ Կոմիտասի պողոտա, 49/2 շենք), այնպես էլ մարզերում՝ տարբեր ձևաչափերով.
✓ առկա,
✓ հեռավար,
✓ խառը
Դասընթացի ավարտին կտրվի վկայական, որի մեջ նշված կլինի ձեր վաստակած կրեդիտների քանակը (առավելագույնը՝ 11 կրեդիտ), ատեստավորումն անցնելու համար անհրաժեշտ է ունենալ նվազագույնը 9-ը կրեդիտ:

Վերապատրաստումներին մասնակցելու համար կարող են դիմել ինչպես դպրոցները, այնպես էլ ուսուցիչներն անհատապես: Կոլեկտիվ հայտագրման դեպքում անհրաժեշտ է ուսուցիչների ամեն առարկայախմբի համար հայտը լրացնել առանձին: Հայտերը լրացնելու համար կարող եք անցնել հետևյալ հղումներով.

Դպրոցների՝ վերապատրաստումներին գրանցման հայտադիմում
https://docs.google.com/forms/d/1f8KwJRe7M_N-4_7aH0dkqEtCaZfOol054yqvN48R6Ic/viewform?fbclid=IwAR0xhT77IaqWkaW8uEQWL4vh0hSAeuAht5-10NMLKHPvyeZWIpcOsHjrzil&edit_requested=true

Ուսուցիչների՝ վերապատրաստումներին գրանցման հայտադիմում
https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSe_CeGNxgVPPAcdOkz4xM_nLdx1Albfz2UL6FPOfbljb56jQw/viewform?fbclid=IwAR0xhT77IaqWkaW8uEQWL4vh0hSAeuAht5-10NMLKHPvyeZWIpcOsHjrzil

*Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 010232648, բջջ՝ 033 22 33 26 հեռախոսահամարներով:*
*Սիրով սպասում ենք:*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11-13763 2021
28 06 2021 թ.